

Էդուարդ Թադևոսյան - 70

Հոկտեմբերի 12-ին Հայաստանի ազգային գրադարանի դահլիճում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Կոմիտասի անվան լարային ազգային քառյակի գեղարվեստական ղեկավար, առաջին ջութակ, ՀՀ վաստակավոր արտիստ, պետական մրցանակի դափնեկիր Էդուարդ Թադևոսյանի ծննդյան 70-ամյակին:

Հայաստանի ազգային գրադարանի մատենագիտության և գրադարանագիտության բաժինը նշում էր նաև «Հիշարժան տարեթվեր» գրքի 70-ամյա հոբելյանը, որը լրանում է այս տարի:

Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը դասական երաժշտության ոլորտում ներդրած ավանդի և հայ մշակույթին մատուցած ծառայությունների համար Կոմիտասի անվան ազգային լարային քառյակի գեղարվեստական ղեկավար, առաջին ջութակ, ՀՀ ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Էդուարդ Թադևոսյանին պարգևատրեց «Հակոբ Մեղապարտ» հուշանդալով:

